

Փիլակրիոսի՝ որ մեծ հազարապետ անուանեալ էր արքունեաց եւ տերութեան առաջին պաշտօնեայ՝ այցելութիւն կ'ուտար:

Չաւեն այն ատեն վիճակը յայտնի եւ պայծառ տեսաւ.— թշնամին, որ իր Արփենին գողցեր յափշտակեր էր, շատ զօրաւոր էր եւ նորա հետ պատերազմիլ իւր կ'արողութենէն վեր. բայց թողուլ երթալ, երբ աստուած իրեն յաջողութիւն ցոյց էր աւեր տեսնելու իւր սիրելի կորուստը, այս նաեւ անկարելի էր, Ուրեմն կ'ըսէր. «Պետք է համբերել եւ սպասէի այսպիսի անզգամաց յաջողութիւնը անշուշտ երկար չի տուեր, եւ պետք է նաեւ աղջիկը տեսնել անգամ մը՝ հետը խօսիլ, գուցէ յանկարծ չուզէ երթալ, եւ ես այն ատեն ի՛նչ ընեմ: Եթէ այնպիսի պարագայ մը հանդիպի, ակամայ իւր կամաց պետք է այդ խեղճ աղջիկը այդ ապականութեան պալատեն ազատեմ. եթէ մեր Տիկինը՝ նորա մայրը ողջ լինէր եւ ինձ ըսէր. «Չաւեն, գնա՛, զաւակս գտի՛ր եւ ինձ բեր», ի՛նչ պիտի ընէի, տղու պէս պիտի խորհրդածէի, ոչ, այլ եթէ յարկ լինէր սուր ի ձեռին՝ զինք պիտի կորզէի... Այդ սուրբ Տիկնոջ մահուան՝ իր աս զակին ողջութեան աստուած դիւ վկայ եւ գործիք ըրաւ, որ իւր առաքիւնութեան ժառանգ եւ յաջորդ լինի Արփենին: Եթէ տեսայ եւ հետը\* խօսեցայ եւ ուզեց ինձ հետ գալ սիրով, լաւ՛, ապա թէ ոչ բռնութեամբ նաեւ պետք է զինք հանեմ այդ խորխորատեն»:

Այս խորհրդածութեամբք, սկսաւ ամէն օր այն տեղուանքը շրջիլ. թեթեւ ծառայութիւններ ընել, Փիլակրիոսի սպասաւորաց ծրի օգնել, այնպէս որ ամիս մը չեղած՝ Չաւեն անունը ծանօթ եղաւ պաղատի ծառայից, բեռ մը, ծանր բան մը վերցնելու օգնութեան եթէ պետք լինէր դուրսեն մէկը փնտրել, զգաւէն կ'ուզէին եւ Չաւեն կը կատարէր ուրախութեամբ ամէն գործ, եթէ բան մը չի տային ձայն չէր հաներ, եթէ քիչ տային առանց վրան նայելու գրպանը կը դներ, ոչ գանգատ եւ ոչ դժգոհութիւն ամենեւին չէր ցցներ: Ուստի գոհ էին իրմէ ամենքը, որոց առաջին շահ շորթումն էր: Իւր այս անշահասիրութիւնը դիտելով տնտեսը, որ իր պաշտօնին պարտաւորութեամբ պալատին առաջին գողը կրնար համարուիլ, հրաւիրեց զգաւէն իւր բնակարանը թողուլ եւ ծովեզրին մօտ՝ պարտեզին ծայրը գիշերային պահպանութեան համար փոքրիկ խրճիթը բնակիլ: Այս գերադոյն առաջարկութիւն մ'էր կորովի ծերուն համար, որ շուտ մը իւր թեթեւ կարասիքը բերաւ եւ այն խրճիթին մէջ գետեղեցաւ:

Հիմա իւր Արփենին կրնար տեսնել եւ միջոց նաեւ ունենալ հետը խօսելու առանձին, եթէ դիպուածը ներկայանար՝ եւ որ չուշացաւ: Նոյեմբեր ամսու գեղեցիկ առաւօտ մը կանուխ տեսաւ, որ պարտեզի դուռը բացուեցաւ, եւ Մամիկոնեան Օրիորդը ելաւ դուրս եւ առանց պարտեզին ուշադրութիւն ընելու շտկուեցաւ դէպի ծովեզրը: Չաւին իւր փոքրիկ լուսամուտեն կը դիտէր ոչ միայն